ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-1011-19.02.2025-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	«Ֆիզիկական կուլտուրայի եվ սպորտի մասին» օրենքում լրացում կատարելու մասին (Կ-1011-19.02.2025-ԳԿ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է նածագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ. Հոդված 1. «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» 2001 թվականի հունիսի 26-ի ՀՕ-196 օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժ.9» կետով. «ժ.9) սահմանում է մանկապատանեկան մարզական կազմակերպությունների անվանակոչության և անվանափոխության կարգը և չափորոշիչները.»:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	«Ֆիզիկական կուլտուրայի եվ սպորտի մասին» օրենքում լրացում կատարելու մասին (Կ-1011-19.02.2025-ԳԿ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է 2-րդ հոդվածը նախագծից հանել, քանի որ տվյալ հոդվածից չի բխում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ	«Ֆիզիկական կուլտուրայի եվ սպորտի	Առաջարկվում է 3-րդ հոդվածի համարակալումը փոխել և	Ընդունվել է	Ընդունվել է

	Գաբրիելյան	մասին» օրենքում լրացում կատարելու մասին (Կ-1011-19.02.2025-ԳԿ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդված	շարադրել հետևյալ բովանդակությամբ. Հոդված 2. 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: 2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ քառամսյա ժամկետում:		
4.	Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ	Առաջարկվում է Օրենքի նախագծի փաթեթը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր օրենքի նախագծով. **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը** **«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** **Հոդված 1.** «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետը «լսումների արդյունքների հիման վրա» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով «: Մանկապատանեկան մարզական կազմակերպությունների անվանակոչումը և անվանափոխումը կատարվում են Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն.»: **Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում	Ընդունվել է	Ընդունվել է

			պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:»		
5.	Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ	Առաջարկվում է Օրենքի նախագծի փաթեթը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր օրենքի նախագծով. **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ** **Օ Ր Ե Ն Ք Ը** **«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** **Հոդված 1.** «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի 12-րդ հոդվածի 23-րդ կետը «լսումների արդյունքների հիման վրա» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «: Մանկապատանեկան մարզական կազմակերպությունների անվանակոչումը և անվանափոխումը կատարվում են Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն.»: **Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:»	Ընդունվել է	Ընդունվել է